

<b>Ամսաթիվ</b>	4 նոյեմբեր 2017թ.
<b>Փոխառություն</b>	L3293-ARM (ԲՖԳ): Զաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, Տրանշ 2 (ԶԿՉՆԾ-2)
<b>Պայմանագրի համար և վերնագիր</b>	L3293-ICB/CW-T3: Երևանի արևմտյան շրջանցող ճանապարհի ճանապարհային հանգույցների կառուցում: Հատված 1 – Արգավանդ-Շիրակ ճանապարհահատված
<b>Հայտերի ներկայացման վերջնաժամկետ</b>	20 դեկտեմբեր 2017թ.՝ ժամը 15:00 (տեղական ժամով)

1. **Հայաստանի Հանրապետությունը** փոխառություն է ստացել Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) **Զաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Տրանշ 2-ի (ԶԿՉՆԾ-2)** ֆինանսավորման համար: Փոխառության մի մասը կօգտագործվի վերոնշյալ պայմանագրի շրջանակներում վճարումների իրականացման նպատակով: Մրցույթը բաց է ԱԶԲ-ի իրավասու երկրներից հայտատուների համար:

2. **Երևանի քաղաքապետարանը ( Գործատուն )** իրավասու հայտատուներին հրավիրում է ներկայացնել կնքված փակ հայտեր **L3293-ICB/CW-T3: Երևանի արևմտյան շրջանցող ճանապարհի ճանապարհային հանգույցների կառուցում: Հատված 1 – Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի** շինարարական աշխատանքների և ծրագրի ավարտման աշխատանքների ձեռքբերման համար ( **Աշխատանքներ** ): Աշխատանքների տևողությունը 24 ամիս է, որին կհաջորդի 365 օր տևողությամբ թերությունների վերացման ժամանակահատվածը: Աշխատանքներն իրականացվելու են Երևան քաղաքի Շենգավիթ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում՝ քաղաքի կենտրոնից համապատասխանաբար հարավ-արևմուտք և հարավ:

Աշխատանքները ներառում են (բայց չեն սահմանափակվում) հետևյալը՝

**Արգավանդի խճուղուց Շիրակի փողոց ճանապարհահատված՝**

Ծրագիրը ներառում է բնապահպանական տեսանկյունից զգայուն Կարմիր բլուր հնավայրի տարածքում մոտ 1,3կմ երկարությամբ երկկողմանի երթևեկությամբ նոր ճանապարհի կառուցումը:

Այն ներառում է հետևյալ աշխատանքները՝

- (i) Առկա կառույցների և կիսակառույց հենապատերի քանդում,
- (ii) Արագընթաց ճանապարհների չափանիշների համաձայն նոր ուղեծրով մոտ 1,3կմ երկարությամբ ճանապարհի երկայնքով 6 երթևեկելի գոտիներով երկկողմանի նոր ճանապարհի կառուցում,
- (iii) Հաղորդուղիների տեղափոխում՝ ներառյալ բարձրավոլտ գծերի տեղափոխում,

- (iv) Հրագրան գետի վրայով 251մ երկարությամբ նոր կամուրջի կառուցում՝ 35մ-42մ 5 թռիչքներով և կենտրոնական 60մ թռիչքով,
- (v) Իջատեղերի կառուցում գոյություն ունեցող Արգավանդի ճանապարհային հանգույցում,
- (vi) Շիրակ փողոցում միակողմանի շրջանաձև երթևեկությամբ ճանապարհի կառուցում:

Այս հատվածն անցնում է բնապահպանական տեսանկյունից զգայուն Կարմիր բլուր հնագիտական տեղանքով: Քանի որ Կարմիր բլուր հնագիտական տարածքը համարվում է հնագիտական հետքերով հարուստ, ծրագրի տեղանքում մշակույթային ժառանգության գնահատումը և կառավարումը հանդիսանում է առաջնահերթություն: Այսպիսով, նախատեսվում են հատուկ մեղմացնող աշխատանքներ, որ պետք է իրականացվեն Կապալառուի կողմից:

Հայտատուները տեղյակ են, որ այս հատվածի աշխատանքներն արդեն մեկնարկված են եղել նախկին Կապալառուի կողմից, ում հետ կնքված պայմանագիրը դադարեցվել է, քանի որ վերջինս չի կարողացել իրականացնել որևէ բանական աշխատանք: Այս տեսանկյունից հետագա Կապալառուն պետք է.

- Ստանձնի արդեն իսկ իրականացված Աշխատանքները,
- Ստուգի հենապատի՝ արդեն իսկ կառուցված մասի ամրությունը և/կամ քանդի այն:

3. Մրցույթի համար կիրառվելու են որակավորմանը համապատասխանելու ձախողման չափանիշները, որին չհամապատասխանելու դեպքում հայտատուն կորակագրվի:

4. **Միջազգային մրցակցային մրցույթը** կանցկացվի ԱԶԲ-ի Մեկ փուլ-Մեկ ծրար ընթացակարգի համաձայն և բաց է Մրցույթային փաստաթղթերում ներկայացված իրավասու երկրների բոլոր հայտատուների համար:

5. Այլ տեղեկատվության ձեռքբերման և մրցույթային փաստաթղթերին ծանոթալանու համար հայտատուները կարող են դիմել

Գնումների մասնագետ պարոն Արման Պետրոսյանին,  
Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի  
իրականացման գրասենյակ ՅՈՒԿ, 511 սենյակ,  
ՀՀ, ք. Երևան 0010, Փ. Բուզանդի 1/3  
Հեռ.՝ +374 10 520973  
Էլ. հասցե՝ [arman.petrosyan@yerevan.am](mailto:arman.petrosyan@yerevan.am) :

6. Մրցույթային փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակն անգլերեն լեզվով անվճար ստանալու նպատակով հայտատուները պետք է գրավոր դիմեն վերոգրյալ հասցով՝ խնդրելով տրամադրել L3293-ICB/CW-T3: Երևանի արևմտյան շրջանցող ճանապարհի ճանապարհային հանգույցների կառուցում:  
Հատված 1 – Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի ( Աշխատանքներ ) մրցույթային փաստաթղթերը:

- **Վերոնշյալ հասցեով**
- Ոչ ուշ քան վերջնաժամկետին՝ 2017թ. դեկտեմբերի 20-ի ժամը 15:00-ին (տեղական ժամով)
- Հայտի Երաշխիքի հետ միասին՝ ինչպես նկարագրված Է մրցույթային փաստաթղթերում:

Հայտերը կբացվեն վերջնաժամկետից անմիջապես հետո հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ, ովքեր ցանկություն կհայտնեն մասնակցել:

8. 2017թ. նոյեմբերի 16-ին՝ ժամը 16:00-ին (տեղական ժամով), վերոնշյալ հասցեում՝ 7-րդ հարկի դահլիճում, կկազմակերպվի մինչմրցույթային հանդիպում: Գործատուի կողմից 2017թ. նոյեմբերի 17-ին՝ ժամը 10:00-ին (տեղական ժամով), կկազմակերպվի դաշտային այցելություն:

-